





ՎՐԱՍԱՆ-ԹՈՒՐԹՄԵՆՍԱՆ

ԱՌԱՆՁՆԱԿԻ ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԿԿՈՐՄ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թույլ կտա նաև Աֆղանստանին ներգրավել տարածաշրջանային ու միջտարածաշրջանային առևտրատնտեսական կապերի մեջ:


Բանակցությունների ընթացքում կարծիքներ փոխանակվեցին երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցությունն արագորեն նոր մակարդակի բարձրացնելու շուրջ: Ընդգծվեց, որ Վրաստանն ու Թուրքիան մտադրված են նպաստել:

նեն ընդլայնել երկկողմ առևտրի ծավալը, զարգացնել համագործակցությունը վառելիքա-էներգետիկական ոլորտում, տրանսպորտի եւ հաղորդակցողիցների բնագավառում, տեքստիլ, թեթև ու քիմիական արդյունաբերության եւ այլ ճյուղերում:


Բանակցությունների արդյունքներով ստորագրվեցին վրաց-թուրքմենական մի շարք համաձայնագրեր՝ ուղղված առևտրական, տրանսպորտային եւ զբասաշրջության ոլորտների զարգացմանը:

Այցի շրջանակներում Վրաստանի նախագահին այցելեց Թուրքմենստանի անկախության հուշահամալիր եւ Թուրքմենստանի առաջին նախագահ Սաֆարմուրադ Լիյազովի հուշարձանը:

Վրաստանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի ԱԳ փոխնախարար Դավիթ Ջալաղանիան, Վրաստանի Առևտրա-



արդյունաբերական պալատի նախագահ Կախա Բախմուրադովիլին, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերեջվիլին:



ԲԵՆՈՒՈՒՄ

«ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՆԸՆԴՐԱՏ ԱՂՈԹԵԼ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԶԱՄԱՐ»

Բելոռուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն իր կառավարության առջև խնդիր է դրել ցանկացած պարագայում նոր շուկաներ գտնել բելոռուսական ապրանքների վաճառքի համար:

«Մենք չենք կարող անընդհատ աղոթել Ռուսաստանի համար, չնայած որ նա մեր եղբայրն է, որովհետև ընդամենը մեկ շուկա փուլովեց, եւ մենք դուրս մնացինք: Մի ժամանակ մեր արտադրանքի 85%-ը վաճառվում էր ռուսական շուկայում, իսկ հիմա՝ ընդամենը 40-45%»,- ասաց նա:

Լուկաշենկոն նշեց նաև, որ Բելոռուսը նվազեցրել է մեկ շուկայից կախվածությունը, սակայն դա բավարար չէ:

«Այս ամենի հետ մեկտեղ, առաջ է եկել նաև Ուկրաինայի հարցը: Չեմ կարծում, որ Ղազախստանում լավ վիճակ է: Դրա համար ցանկացած գնով մեզ նոր շուկաներ են հարկավոր: Եվ դա հնարավոր է»,- նշեց Լուկաշենկոն:

ԱՎԱՏՐԱԼԻԱ

ՄԻՋԱՂԵՊ ՄԻՂՆԵՈՒՄ

Դեկտեմբերի 15-ի առավոտյան զինված հանցագործը 17 մարդու էր պատանդ վերցրել Lindt սրճարանում: Չարագործը 49-ամյա իրանցի Սեն Չարոն Սոնիան էր, որը հայտնի էր նաև որպես շեյխ Չարոն: Նա փախստականի կարգավիճակով Ավստրալիա էր ժամանել 1996 թվականին, իսկ անցյալ տարի մեղադրվել էր սպանությանը մասնակցելու մեջ, սակայն գրավով ազատ էր արձակվել:

Ոստիկանության եւ հանցագործի դիմակայությունը շարունակվել է մոտավորապես 17 ժամ: Իրավապահներին հաջողվել է ազատել 15 մարդու, պատանդներից երկուսը զոհվել են: Հանցագործը ոչնչացվել է: Ոստիկանության տվյալներով՝ եւս հինգ մարդ, այդ թվում մի իրավապահ, վերքեր են ստացել:

ՊԼԱՆՍՏԱՆ

140 ՄԱՐԴ՝

ԱՐԱՐԵԿԿՈՒԹՅԱՆ ՋՈՐ

«Թեհրանի ի Թալիբան Պակիստան» շարժման զինյալները դեկտեմբերի 16-ին Փեշավարում գրավել էին տեղի զինվորական ուսումնարանը: Դպրոցի վրա թալիբների գրոհի զոհ է դարձել ավելի քան 140 մարդ, որից 134-ը՝ երեխաներ: Տուժածներից շատերը մնում են հիվանդանոցներում: Հարձակումն իրականացրել են յոթ թալիբներ, որոնք ունեցել են մահապարտների գոտիներ:

«Թալիբանի» ներկայացուցիչը հայտնել է, որ այդ ակցիան պատասխան էր թալիբների դեմ պակիստանյան բանակի գործողություններին:

Պակիստանի վարչապետ Նավազ Շարիֆն ավելի վաղ երկրում եռօրյա սուգ էր հայտարարել:

ԵՎՐԱՍԻՅԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՊԱՂԵՍՏԻՆԻ

ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱՉԵՎ

Դեկտեմբերի 17-ին, Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստում ավարտվեց Պաղեստին պետության ճանաչման վերաբերյալ բանաձեռի նախագծի քվեարկությունը եւ կողմ 498, դեմ՝ 88 ձայներով Եվրախորհրդարանի պատգամավորները ճանաչեցին Պաղեստին պետությունը: Բանաձեռով Եվրախորհրդարանն աջակցում է Պաղեստին պետության սկզբունքային ճանաչմանը եւ խնդրի 2 պետություն լուծման բանաձեռին՝ հիմքում ունենալով 1967թ. սահմանը:

Չոկտեմբերին Պաղեստինը որպես պետություն ճանաչելու բանաձեռ էր ընդունել Շվեդիայի խորհրդարանը՝ դառնալով առաջին Եվրոպական պետությունը: Շվեդիայի օրինակին հետեւել են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան եւ Իռլանդիան: Վերոնշյալ երկրների խորհրդարաններում հարցը համարվել է օրակարգային:

ՊԵՏՐՅՈՒՋԵ-2015

ԲՅՈՒՋԵԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԵ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Վրացական երազանք» կոալիցիան:

Նախագծի համաձայն, բյուջեում մուտքերը սահմանվել են 9 միլիարդ 875 միլիոն, փոխանցումները՝ 9 միլիարդ 575 միլիոն լարիի չափով:

Միջին հաշվարկային ժամանակահատվածում սպասվում է տնտեսության աճ 5,5 տոկոսի չափով, ՀՆԱ-ի աճը ծրագրված է 3,5-4 տոկոսի սահմաններում:

Ելնելով մակրոտնտեսական ցուցանիշներից, նմանալ ՀՆԱ-ի ծավալը կազմելու է 31,9 միլիարդ լարի, իսկ 2018 թվականի համար դրա ծրագրված աճը կազմելու է 41,9 միլիարդ լարի:

Պետբյուջեի սկզբնական նախագծի համեմատությամբ, հարկային մուտքերի

ցուցանիշներն ավելացվել են 140 միլիոն լարիով եւ վերջին հաշվով կազմել՝ 8,030 միլիոն լարի, ինչը 2014 թվականի ծրագրած ցուցանիշը գերազանցում է 800 միլիոն լարիով եւ կազմում ՀՆԱ-ի 25,2 տոկոսը:

2015 թվականի պետբյուջեի եկամուտների ցուցանիշը սահմանված է 8,090 միլիոն լարիի չափով, ինչը բյուջեի նախագծի նախնական տարբերակից ավելի է 160 միլիոնով:

2015 թվականին պետբյուջեի հարկային մուտքերի ծրագրած ցուցանիշը 2014 թվականի հաստատված ցուցանիշից ավելի է 780 միլիոն լարիով, իսկ բյուջեի նախնական տարբերակի համեմատությամբ՝ 140 միլիոն լարիով եւ կազմում է 7600 միլիոն լարի:

2015 թվականի համար դրամաշնորհների չափը սահմանված է 215 միլիոն լարիով, ընդ որում՝ 115 միլիոնը կազմում են բյուջեումային դրամաշնորհները (նախնական տարբերակում այն սահմանված էր 30 միլիոն լարիի չափով), իսկ 100 միլիոնը՝ ներդրումային՝ նախնական տարբերակի 5 միլիոն լարիի դիմաց:

2015 թվականի պետբյուջեի մյուս եկամուտների կանխագծվող ցուցանիշը, նախնական տարբերակի համեմատությամբ, նվազեցվել է 15 միլիոնով եւ սահմանվել 275 միլիոն լարիի չափով:

Պետբյուջեի վերջնական տարբերակով, կենսաթոշակը կավելացվի 10 լարիով, կհասցվի 160 լարիի: Կառավարությունը ծրագրում է կենսաթոշակն ավելացնել 2015 թվականի սեպտեմբերի 1-ից:

ԿՐԹԱԿԱՆ

30 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԱՄԵՐԻԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՐ



Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեն «Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան» հիմնադրամի գործադիր տնօրենի հետ, Քուբայիսիի Ակակի Շերեբելու անվան պետական համալսարանում անցկացրեց տեղեկատվական հանդիպում:

Նա ներկայացրեց բարձրագույն կրթության այն նախագծի մանրամասները, որը ֆինանսավորում է «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան: «Սան Դիեգոյի պետական համալսարանը եւ Վրաստան-2020» նախագիծը իրականացնում են

Սան Դիեգոյի համալսարանը, Վրաստանի պետական երեք բուհերի կոնսորցիումով: Նախագծի շնորհիվ շրջանավարտները Վրաստանում կստանան ամերիկյան կրթություն եւ ինժեներական տեխնոլոգիաների ու բնագիտության մասնագիտություններով դիպլոմներ:

Նախագծի բյուջեն կազմում է 30 միլիոն դոլար:

ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑԻ ԶԻՄՆԱԴՐՈՒՅԹՆ ԻՐԵՆ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ

Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեն հայտարարեց, որ անվտանգ դպրոցի հիմնադրույթն իրեն արդարացրել է:

Մեկնաբանելով Սամտրեդիայի շրջանի Մելաուրի գյուղի դպրոցում տեղի ունեցած միջադեպը, երբ հարբած վիճակում անձնավորությունը ներխուժել է դպրոց ու փորձել կողոպտել ուսուցչին, կրթության նախարարը հայտարարեց. «Անվտանգ դպրոցի հիմնադրույթն իրականացվում է այն ժամանակվանից, երբ մանդատները դադարեցին վերահսկել ուսուցիչներին: Մանդատները կողմնորոշված են ապահովելու անվտանգությունը: Մենք նախապատրաստում ենք, որոնք գործելու են այն շրջաններում, որտեղ մանդատները չեն գործում»:

Սանիկիձեի հավաստմամբ, դպրոցներում խստորեն պահպանվում են անվտանգության միջոցառումները:



ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՈՒՈՒԼ ԽԱՋԻՄԲԱ. «ԻՆՎՈՒՐՆԵԿ-Ը ՊԵՏՔ Է ՊԱՏԿԱՆԻ ԱՐԽԱՋ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Արխագիայի ինքնահռչակ հանրապետության նախագահ Ռաուլ Խաջիմբայի հայտարարության համաձայն, Ինվուրնեկ-ը, ինչպես նաև Արխագիայի տարածքում գտնվող բոլոր օբյեկտները պետք է պատկանեն արխագ ժողովրդին:

«Մինչ օրս տեղյակ չենք Ինվուրնեկ-ից, արդյոք, ստանում ենք այն 40 տոկոսի եկամուտը, որը պատկանում է մեզ: Մենք ստույգորեն պետք է իմանանք՝ արդյոք, ու-

նե՞ք հնարավորություն իրականում ստանալու այդ ծավալը: Նախագահը եւ գործադիր իշխանությունը պետք է ձեռնարկենք համապատասխան միջոցներ, մշա-

կենք համապատասխան փաստաթղթեր, ըստ որի՝ պետք է հստակեցվի Ինվուրնեկ-ի սեփականության հարցը: Հարցը բավականին բարդ է եւ ոչ դյուրին կարգավորելի: Սակայն գտնում են, որ այն ամենը, ինչ գտնվում է մեր տարածքում, պետք է պատկանի արխագ ժողովրդին»,- հայտարարեց Խաջիմբան:

ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐԶ

ԱՎԱՐԱ-ԿԱՆԵԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆՆԵՐԻ ՌԱՋՄԱՎԻՐԱԿԱՆԻ ՓՈՒՆԱՐԵՆ

Դադստանի լեռնային շրջաններով ձգվող Ավարա-կանեթյան ճանապարհը, որը կարող է Ռազմավիրական ճանապարհի լիարժեք այլընտրանքը դառնալ ռուս-վրացական եւ ռուս-հայկական տրանսպորտային հաղորդակցության շրջանակներում, սպառնալիք չէ Վրաստանի անվտանգությանը:

ժի Վրաստանի վրա հարձակվելու համար, ապա, կարծում են, դուրս վստահվում եք: Նա հեշտությամբ դա կարող է անել՝ օգտագործելով Արխագիայում եւ Հարավային Օսեթիայում տեղակայված իր զինուժերը»,- ասաց Իմերեջվիլին:

Հիշեցնենք, որ դեռեւս 19-րդ դարում գոյություն ունեցած Ավա-

րա-կանեթյան ճանապարհի վերականգնումը կօգնի բեռնաթափել Ռուսաստանից դեպի Վրաստան եւ Հայաստան ձգվող միակ ցամաքային երթուղին: Շինարարությունը կպահանջի կառուցել 80 կիլոմետր երկարությամբ ճանապարհային պատառ, հինգ թունել եւ 26 կամուրջ:

Նման հայտարարությամբ համոզեւ է եկել Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա

Իմերեջվիլին: «Եթե դուք կարծում եք, որ Ռուսաստանն այդ ճանապարհը որպես հենակետ կօգտագոր-



Շարքից շարք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ



ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ 10 ՄԵՔԵՆԱ՝ ՍԱՄՑԻՆ-ՉԱՎԱԽԵԹԻՆ

Դեկտեմբերի 17-ին Ախալցխայի տեղի ունեցավ Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում շտապ օգնության 10 նոր մեքենաների հանձնման արարողությունը: Նոր մեքենաներով համալրեցին նաև Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շտապ օգնության կենտրոնները:

Սիջոցառմանը ներկա էին բժշկական շտապ օգնության կենտրոնի տնօրեն Թեյմուրազ Խարաշվիլին, փոխտնօրեն Գիորգի Շատիրաշվիլին, Սամցխե-Չավախեթիում պետական լիազոր-նահանգապետ Ակակի Մաչուտաձեն, տեղի մունիցիպալիտետների վարչության նախագահները: Կենտրոնը Սամցխե-Չավախեթի տարածաշրջանին հանձ-

նեց բժշկական ժամանակակից սարքավորումներով հագեցված 18 ավտոմոբիլ, որից 9-ը ամենագնացներ են, իսկ մեկը՝ օգտագործվելու է ըստ անհրաժեշտության: Բժշկական շտապ օգնության կենտրոնի ավտոպարկի նորացումը սկսվեց հոկտեմբերի 29-ին: Ներկա դրությամբ, տարածաշրջանին տրվել է միջազգային չափորոշիչներով հանդերձավորված 104 մեքենա:

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՖԻՆԱՆՍԱԿՈՐԻ ՌԵԶԻԴԵՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Վրաստանի առողջապահության նախարարությունը կֆինանսավորի ռեզիդենտության կրթությունը շարունակել ցանկացողների ուսուցումը:


«Բժշկական կրթության հետդիպլոմային ծրագրի» շրջանակներում ուսանողները, ովքեր կստանան նախարարության ֆինանսավորումը, հաջորդ երեք տարիների ընթացքում աշխատելու են բարձրակետ ու սահմանները գյուղերում:

Ռեզիդենտության սովորել ցանկացողները դիմումը ներկայացնելու են մինչև դեկտեմբերի 31-ը՝ հետևյալ մասնագիտու-

թյուններով. անեստեզիոլոգ եւ ռեանիմատոլոգ, ներքին օրգանների բժշկություն, մանկաբուժություն, ընդհանուր վիրաբուժություն, գինեկոլոգիա, անհետաձգելի բժշկություն, նեոնատալոգիա:

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության փոխնախարար Վալերի Կվարացիելիան, ռեզիդենտության ավարտելուց հետո այդ ուսանողները աշխատելու են

երկրի մասշտաբով 27 մունիցիպալիտետներում: Նրա խոսքերով, ներկա դրությամբ, ստացվել է երեք հայտ: Կվարացիելիան երիտասարդներին ակտիվության կոչ է անում: Ընդհանուր առմամբ, նախարարության կողմից ֆինանսավորվելու է 40 ուսանող:



ՀՐԵԱՆԵՐԸ ՆՇԵՑԻՆ ԽԱՆՈՒԿԱ ՏՈՆԸ

Դեկտեմբերի 16-ին աշխարհի բոլոր հրեաները տոնում են խանուկան: Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հատուկ ուղերձով շնորհավորեց վրաստանաբնակ հրեաներին՝ խանուկայի օրվա առթիվ:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին անմամբ մասնակցեց Թբիլիսիի Սինագոգայում անցկացված տոնական արարողությանը եւ հրեաներին շնորհավորեց տոնի առթիվ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին աշխատանքային հանդիպում ունեցավ նախարարների կաբինետի անդամների եւ նահանգապետների հետ: Հանդիպման զխավոր թեման ընթացիկ տարվա ընթացքում տարածաշրջաններում իրականացված եւ առաջիկայում իրականացվելիք նախագծերն էին:

Նահանգապետները վարչապետին տեղեկատվություն ներկայացրին տարածաշրջաններում ստեղծված իրավիճակի, առկա հիմնախնդիրների եւ խոսեցին 2015 թվականի առաջնահերթությունների մասին:

ՊԱՍԱ ՍԻԶԱՆԻՇՎԻԼԻՆ՝ ՔՎԵՍՈ ՔԱՐԹԼԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

Վրաստանի կառավարության որոշմամբ, Քվեմո Քարբլիի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետի պաշտոնում առաջադրվել է Պաստա Սիզանիշվիլուն թեկնածությունը: Նա 2006 թվականից տարբեր պաշտոններ էր զբաղեցնում նախկին վարչապետ Բիծինա Իվանիշվիլու ընկերություններում: Այս պաշտոնը թափուր է հայտարարվել նրանից հետո, երբ Գիորգի Մղերիշվիլին նշանակվեց քրեա-կատարողական եւ պրորա-ցիայի նախարար:



ԱԽԱԼՔԱԼՔԻ

ՏՈՒԿԱՆՔՆԵՐ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 15-ին Ախալքալաքի մասնավոր խանութների սեփականատերերը, սահմանված բարձր տուգանքների կապակցությամբ, մունիցիպալիտետի վարչության շենքի առջև անցկացրին բողոքի գործողություն: Նրանք պահանջում են դադարեցնել առևտրական տերերին, իրենց համոզմամբ, «զանգվածային եւ ապօրինի» տուգանքների սահմանումը:

«Ինձ տուգանել են 48000 լարիով, չգիտեմ ինչու, թեպետ իրենք էլ չգիտեն: Դիմել եմ Թբիլիսիի դատարանին: Արդեն երկու անգամ եղել են դատական լուսմաներ, սակայն դատարանը դեռևս որոշումը չի ընդունել, քննարկումը դեռևս չի ավարտվել: Մինչև հարցը չլուծվի, խանութը չեմ բացի: Նոր տարին էլ անգամ չեմ մշի», - ասաց գործողության մասնակիցներից մեկը:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՑ

Դեկտեմբերի 29-ից մանկապարտեզներում կմեկնարկեն ծննդյան արձակուրդները, որոնք կշարունակվեն մինչև 2015 թվականի հունվարի 12-ը: Սույն որոշումն ընդունել է Թբիլիսիի քաղաքապետարանը:

ԲՆԱՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԲՆԱՊԱՐՊԱՆԱԿԱՆ 39 ՆԱԽԱԳԻԾ



Վրաստանի բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարար Էլզուրա Խոկրիշվիլին ներկայացրեց իր գլխավոր գերատեսչության վերջին երկու տարվա աշխատանքի հաշվետվությունը:

ման ուղղությամբ: Մասնավորապես, վերականգնվել է 2008 թվականի պատերազմի ժամանակ այրված Բորժոմիի անտառների 75 հեկտար տարածքը, ավարտվել է Բորժոմի-Բակուրիանի եւ Խարազաուլիի անտառային զանգվածների գույքագրումը, Սամցխե-Չավախեթի տարածաշրջանում իրականացվել են վնասատուների դեմ պայքարի մասշտա-

բային միջոցառումներ: Այդ նպատակով, հատկացվել է նշանակալի գումար:

Հաշվետու ժամանակահատվածում հիմնվել են բնության 16 հուշարձաններ, ավարտվել է պահպանվող տարածքների վարչական շենքերի եւ ենթակառուցների վերանորոգումը: Հաշվետու ժամանակահատվածում հիմնվել են երկու արգելանոցներ, որոն-

ցից մեկը գտնվում է Չավախեթիում:

Նախարարի խոսքերով, իրականացված աշխատանքների արդյունքում զգալիորեն ավելացել է գրասառչիկների թիվը, այն հասել է գրեթե 1,3 միլիոն մարդու: Հաշվետու ժամանակահատվածում վավերացվել է 11465 իրավախախտում, արդյունքում գրանցվել է 5624300 լարիի տուգանք:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆԸ ԿԴԱՌՆԱԿ ԻՍԿԱԿԱՆ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԻ»

Դեկտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների համար անցկացրեց ընդունելություն, որտեղ ներկայացրեց 2014 թվականի ձեռքբերումներն ու 2015 թվականի համար ծրագրված նախագծերը:

Ելույթ ունենալով տոնական ընդունելությանը Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունը ջանքեր չի խնայի երկրի քաղաքացիների կյանքը բարելավելու համար: Անդրադառնալով 2014 թվականի ձեռքբերումներին, վարչապետը դրանց թվում նշեց Եվրամիության

հետ ասոցիացիայի համաձայնագրի ստորագրումը, առողջապահության եւ կրթության մատչելիության բարձրացումը, օրենքի գերակայության հաստատումը, ժողովրդավարական կայուն ինստիտուտների գործարկումն ու ներդրումների ծավալները:

Կառավարության ղեկավարը վստա-

հույն հայտնեց, որ 2015 թվականին Վրաստանն ավելի մեծ հաջողությունների կհասնի:

«Իմ նպատակը՝ 2015 թվականը իսկական «աշխատանքի տարի» դարձնելն է: Ես ու իմ թիմը ջանքեր չենք խնայի, որպեսզի բարելավվի Վրաստանի բոլոր քաղաքացիների կյանքը, որպեսզի ապահովվի մեր երկրի բարեկեցությունն ու խաղաղ ապագան: Յուրաքանչյուր օրը փոքր-ինչ ավելի լավը կլինի միմյանցից», - հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կառավարությունը Եվրամիության աջակցությամբ ներկայացրեց տարածաշրջանային զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը, որն ուղղված է երկրի ողջ մասշտաբով սոցիալ-տնտեսական հավասարակշռված ու կայուն զարգացման ապահովմանը:

Ինչպես տեղեկացրին Վրաստանում Եվրամիության ներկայացուցիչներին, նախագիծը նպատակադրված է «Նվազեցնել Թբիլիսիի կենտրոնական շրջանների ու քաղաքի մյուս հատվածների, ինչպես նաև մայրաքաղաքի սահմաններից դուրս գտնվող գյուղական եւ քաղաքային շրջանների միջև անհավասարության նվազեցմանը», նաև՝ «տնտեսական զարգացմանը, աշխատատե-

րերի ստեղծմանը, կյանքի որակի բարձրացմանը»:

Վերոնշյալ նախագծի իրականացման համար Եվրամիությունը հաջորդ երկու տարիների ընթացքում Վրաստանին կներկայացնի 30 միլիոն Եվրո-ի օգնություն:



34 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ

Բյուջեյի լրացուցիչ կարգով արեւելյան գործընկերության նախագծի իրականացման ու նախագծին մասնակից երկրներում ժողովրդավարության զարգացման համար հատկացրել է 34 միլիոն Եվրո:

Այդ գումարը փոխանցվելու է Արեւելյան գործընկերության նախագծին մասնակից Վրաստանին, Հայաստանին, Ուկրաին-

նային, Ադրբեջանին, Մոլդովային եւ Բելոռուսին:

Համապատասխան փաստաթուղթն ար-

դեն ստորագրել են Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Գաբրիելա Բատանի-Ռազգանին եւ Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ Միկայել Քելերը:

Արեւելյան գործընկերության անդամ երկրներն այդ գումարից կարող են օգտվել երեք տարի անց:



ԵՎՐԱԽՆՏԵՐՈՒՄ

ԱՍՈՑԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՅՎԵՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տաքին կապերի կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն եւ Եվրոպական ինտեգրացման հարցերի կոմիտեի նախագահ Վիկտոր Դոլիձեն, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմեդլիշվիլին:

Վավերացմանը ներկա էր նաեւ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, որին Ստրասբուրգի այս միջոցառմանը հրավիրել էր Եվրախորհրդարանի ամենաբազմաճանգի կուսակցությունը՝ Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը:

Եվրախորհրդարանն ընդունեց նաեւ համապատասխան բանաժեռ, որը բովանդակում է կատարման համար ոչ պարտադիր հանձնարարականներ: Հանձնարարականներից մեկը վերաբերում է ընտրական արդարադատությանը: Եվրախորհրդարանը բանաձեռում դատապարտեց Վրաստանի տարածքների բռնազավթմանն ուղղված Ռուսաստանի գործողությունները:

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆԸ

Վաչինգտոնը բարձր գնահատեց Եվրախորհրդարանի կողմից Եվրամիության եւ Վրաստանի միջեւ ստացիացման համաձայնագրի վավերացումը:

ԱՄՆ պետդեսպարտամենտի մամուլ քարտուղար Ջենի Փասկիի հայտարարությամբ, դա նշանակալի իրադարձություն է Վրաստանի եվրատանտան ինտեգրման ճանապարհին: «Դա այն վստահության աճի վկայությունն է, որը Եվրոպայի տաճում է Վրաստանի նկատմամբ եւ աջակցության ընդգծումը երկրում իրականացվող բարեփոխումների հարցում: Միացյալ Նահանգները Վրաստանի ժողովրդին ցուցաբերվող աջակցության հարցում միանում է Եվրոպային», հայտարարեց Փասկին:

Վրաստանի նկատմամբ եւ աջակցության ընդգծումը երկրում իրականացվող բարեփոխումների հարցում: Միացյալ Նահանգները Վրաստանի ժողովրդին ցուցաբերվող աջակցության հարցում միանում է Եվրոպային», հայտարարեց Փասկին:

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՄՈՏԵՅԱՆՔ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եվրոպական իմ գործընկերներին սույն որոշման կապակցությամբ, քանզի հավատում եմ, որ Եվրոպայի հետ Վրաստանը կդառնա ավելի պաշտպանված, զարգացած տարածաշրջան, ավելի մեծ հեռանկարներով», հայտարարեց Գիրգի Մարգվելաշվիլին:

Անդրադառնալով Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձեռին, Վրաստանի նախագահը նշեց, որ շատ ավելի մեծ ուշադրություն պետք է հատկացվի Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության վրա:

Նա իր ելույթում նշեց, որ համաձայնագրի վավերացումը կնպաստի տարածաշրջանում կայունության գործընթացին: «Այսօր մեր երկրի համար առանձնակի է կարելի օր է, մենք մոտեցանք Եվրոպական ընտանիքին», հայտարարեց Վրաստանի նախագահը:

Նրա խոսքերով, «մեր երկրի բոլոր նախագահները՝ Գամախուրդիան, Շեարդնաձեն, Սաակաշվիլին, ինչպես նաեւ մեր կառավարությունը այս գաղափարի կողմնակիցներն են: Մենք հավատարիմ ենք այդ գաղափարին»:

Ինչպես նշեց Գիրգի Մարգվելաշվիլին Վրաստանի պատմական եւ քաղաքական նպատակը Եվրամիությանն անդամակցելն է: Մարգվելաշվիլու խոսքերով, Վրաստանը կհասնի իր նպատակին, կդառնա Եվրամիության եւ Եվրոպական ընտանիքի լիարժեք անդամ:

ԻՐԱԿԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՇՆՈՐՀԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ՎԱՏԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տահության համար: Վերջին տարիներին մենք ջանք չէինք խնայում ժողովրդավարական բարեփոխումների իրականացման համար, որոնք էլ պայմանավորեցին այսօրվա հաջողությունը: Ասոցիացման համաձայնագրի շնորհիվ մենք կապահովվենք գործողությունների ծրագրով, որպեսզի բարեփոխումների գործընթացը շարունակվի, եւ մենք հասնենք Եվրամիության վերջնական անդամակցությանը», հայտարարեց Իրակի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքերով, Վրաստանն այսօր Եվրոպայի հետ հաջող գործընկերության օրինակ է հանդիսանում. «Մենք որոշել ենք լրիվությամբ եւ կարճ ժամանակում կատարել պայմանավորվածությունները, որպեսզի երկրում լիարժեքորեն հաստատվեն Եվրոպական չափորոշիչները: Վրաստանը կայուն ժողովրդավարության, ակրտիվ էկոնոմիկայի երկիր է», հայտարարեց վարչապետը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՄ

ՕԹԱՐ ԴԱՆԵԼԻԱ. «ԱՌԱՋԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԵՆՔ ՀԱՏ ԱՎԵԼԻ ՀԱՎԱԿՆՈՑ ԾՐԱԳՐԵՐ»

Արդեն երկրորդ տարին է, ինչ գյուղատնտեսության ոլորտը հայտարարվել է գործադիր իշխանության առաջնահերթություններից մեկը եւ ոլորտի զարգացման համար ծախսվել է հարյուր միլիոնավոր լարի: Արդյունքում, այս տարի մշակվել են շատ ավելի մեծ հողատարածքներ, զգալիորեն ավելացել է գյուղմթերքների արտադրության եւ արտահանման ծավալը, կարգավորվել է ստացված արտադրանքի իրացման մեխանիզմը: Թեպետ առաջիկայում ոլորտի առաջընթացի զարգացման համար անելիքները շատ են: Մեր գրուցակիցը Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան է:

- Բատոն Օթար, անցած երկու տարիների ընթացքում Ձեր գլխավորած ոլորտում նշանակալի առաջընթաց է գրանցվել, թեպետ ծախսվել են նաեւ նշանակալից գումարներ: Խոսքը վերաբերում է մոտ 900 միլիոն լարիին: Ի՞նչ արդյունքներ են գրանցվել այս տարի եւ ի՞նչ սպասելիքներ կան:

րող է շարունակվել: - Հարցն իրոք հրատապ է, քանի որ շատերին է հետաքրքրում: Միանգամից նշեմ, որ գյուղատնտեսության առանձին ոլորտների ֆինանսավորման նախագծի շարունակությունը կախված է շատ գործոններից: Մեր նպատակն է նյութական աջակցությամբ ոլորտը դուրս բերել ճգնաժամից, այն հաշվով, որպեսզի ժա-

րացմանն ուղղված քայլը: Ներկա դրությամբ, արդեն գրանցվել է շուրջ 300 գյուղատնտեսական կոոպերատիվ: Գերատեսչության կողմից առանձնակի մոտեցում է ցուցաբերվում գյուղատնտեսական մեծ միավորների նկատմամբ, ամեն ինչ արվում է դրանց մրցունակության բարձրացման, իրացման շուկաների ապահովման ուղղությամբ:

Նախարարությունն ուշադրության կենտրոնում է պահում ոռոգման համակարգերի վերանորոգման, նոր համակարգերի կառուցման հարցը: Միայն այս տարի կարգավորվեց 88-90 հազար հեկտար հողատարածքի ոռոգման հիմնախնդիրը: Այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

- Մի քանի խոսք առաջիկա ծրագրերի մասին:

- Վերջին երկու տարիների ընթացքում ոլորտում կատարած աշխատանքները թույլ են տալիս իրականացնել լայնամասշտաբ նախագծեր: Նոր տեխնոլոգիաների ներդրումը թույլ է տալիս կուտակել բավականին ծավալուն ռեսուրսներ, որը էլ ավելի է արագացնում ոլորտի զարգացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր մթերքներն աչքի են ընկնում բարձր որակով եւ մեծ մասամբ էկոլոգիապես մաքուր են, ապա անհամեմատ մեծանում է միջազգային շուկայում դրա մրցունակության մակարդակը: Մեր խնդիրն է հնարավորինս աջակցել նման մթերքի արտադրությանն ու իրացմանը, առավել եւս, որ, ներկա դրությամբ, մեր տրամադրության տակ է Եվրամիության 500 միլիոնանոց շուկան: Եվ այդ հնարավորությունը ձեռքից բաց թողնել չի կարելի:

- Քանի որ խոսք բացվեց իրացման շուկայի մասին, ապա, ի՞նչ է արվում դրա ընդլայնման ուղղությամբ:

- Ինչպես գիտեք, այսօրվա դրությամբ, մեր գյուղմթերքների արտահանման գլխավոր տարածքը Ռուսաստանն է: Վերջին տարվա ընթացքում Ռուսաստան արտահանվող մթերքների ծավալը գրեթե քառապատկվել է, սակայն բավարարվել միայն այդ շուկայով չի կարելի, ուստի եւ նախարարությունն այլընտրանքային շուկաների որոնումը համարում է առաջնահերթային ուղղություն: Լուրջ ուսումնասիրություններ են տարվում ինչպես Եվրամիության երկրների, այնպես էլ՝ ասիական, մասնավորապես, չինական շուկայի պահանջարկի ուսումնասիրության ուղղությամբ, ինչը թույլ կտա հստակեցնել այն արտադրանքի տեսականին, որի իրացումը բարդություններ չի առաջացնի:

Մի խոսքով, առաջիկայի համար նախատեսված են շատ ավելի հավանոտ ծրագրեր, քան մինչ այդ արել ենք, քանզի թե՛ ֆինանսական միջոցները, թե՛ տեխնիկական հնարավորությունները արդեն թույլ են տալիս ոլորտի առջեւ դնել շատ ավելի մեծ խնդիրներ:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



Վրաստանի վարչապետի մամուլ ծառայության տեղեկատվությամբ, «Արտադրիչ Վրաստանում» նախագծի շրջանակներում, կառավարությունը հաստատել է նոր ձեռնարկությունների բացման աջակցության համար, անմիջական վաճառքի կարգով օբյեկտների սեփականաշնորհման մասին կարգադրությունը:

Վերջին տվյալներով, «Արտադրիչ Վրաստանում» նախագծի շրջանակներում արդեն հաստատվել է 43 նախագիծ, որոնց գումարային ներդրումը կազմում է 107 միլիոն դոլար: Հաստատված նախագծերն իրականացվելու են ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ Վրաստանի տարածաշրջաններում:

Հիշեցնենք, որ Վրաստանի կառավարությունը «Արտադրիչ Վրաստանում» նախագծի իրականացմանը ձեռնամուխ եղավ 2014 թվականի հունիսի 1-ից: Նախագծի բյուջեն կազմում էր 46 միլիոն լարի: Այդ գումարից 30 միլիոնը ծախսվելու էր գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրությունների, իսկ 16 միլիոնը՝ ինդուստրիալ արտադրանքի թողարկման վրա: Նախագիծն իրականացնում են Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման ու գյուղատնտեսության նախարարությունները:

Պետությունը շահագրգռված ձեռներեցներին առաջարկում է ֆինանսական, ենթակառուցային եւ խորհրդատվական աջակցություն: Նախագծի շրջանակներում բանկերը արտադրողներին առաջարկում են վարկեր, որոնց տրման պահից 24 ամսվա ընթացքում տոկոսային դրույքի 10 տոկոսը մարում է կառավարությունը: Նախագծի շրջանակներում բանկերի կողմից տրված նվազագույն վարկը կազմում է առնվազն 150 հազար, իսկ առավելագույնը՝ 2 միլիոն դոլար:

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՎՅԱՆ



մանակի ընթացքում այն դառնա եկամտաբեր եւ կախված չլինի նպաստների ծավալից: Հնարավոր ամեն ինչ արվում է ինչպես գյուղմթերքների արտադրության, այնպես էլ՝ իրացման հետ կապված հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, կոնկրետ քայլեր են իրականացվում Եվրամիության երկրներում գյուղմթերքների արտահանման ծավալների ավելացման ուղղությամբ: Մի խոսքով, գյուղատնտեսության ոլորտում իրականացվում է վերակարգավորում, ինչն աստիճանաբար իր ազդեցությունը կգործի զարգացման ընթացքի վրա:

Նախարարությունը պարբերաբար մանրամասն քննարկում-վերլուծում է բոլոր այն նախագծերը, որոնք ներդրվելու են ոլորտում, հնարավորինս արվում է ռիսկերի կանխման, կորուստների փոխհատուցման համար: Լայնորեն կիրարկում ենք այլ երկրների իրենց արդարացրած փորձերը: Մեծ նշանակություն ենք տալիս տեխնոլոգիական նախագծերի ներդրմանը, քանի որ դրանք ապացուցված եւ հիմնավորված են գիտականորեն ու դրանց ներդրումը նշանակալից քայլ է դառնում ոլորտի զարգացման ուղու վրա:

Նման նորամուծությունների թվին կարելի է դասել գյուղական տնտեսությունների խոշո-